

գարձեալ քրիստոնեայ բնակչութիւնը ստուարացաւ. նոր եկեղեցիներ հիմնուեցան և գտնուածներն ալ նորոգուեցան. արեւմտեան ճարտարապետութիւնը և քանդակագործութիւնը մեծապէս հոն զարգացան: Սաչակրօց ժամանակ հայկական կարեւոր գաղութի մը և եկեղեցիի մը գոյութիւնը յիշատակարանով մը կըրնանք հաստատել: Սաչակիրք՝ Ս. Երկրի իրենց տիրապետութեան շրջանին ունէին Les Assises de Jérusalem խորագրով Օրինագիրք մը, որուն մէջ (Բ. Հտր. էջ 511, 528) երկու տեղ կը յիշատակուի Պաղեստինեան Կեսարիոյ Հայոց գաղթականութիւնը և եկեղեցիին: Հ. Ալիշան ևս կը յիշատակէ իր Սիսուանին մէջ (էջ 482). «Կեսարիոյ Պաղեստինոյ, ի մին ևս լինել թուով ինչ Հայոց վկային Աստիզք Եկուսողէմի, ի կէս ԺԲ. դարու»:

Թերևս Պաղեստինեան Կեսարիոյ հայ գաղութին և եկեղեցիին երբեմնի գոյութեան պատճառու է որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին մէջ եղած են եպիսկոպոսներ, որ նոյն տեղւոյն անուամբ տիտղոսակիր եպիսկոպոսներ եղած են, ինչպէս Յարութիւն եպս. Լեոնեան Պոլսեցի, 1670ին ծնած, և եպս. ձեռնադրուած Պաղեստինեան Կեսարիոյ. յիշեալը ճամբորդութիւններ կատարած է 1719—1720ին Սպանիա և Հռովմ, կ'այցելէ Լիզպոնայի թագաւորին և 1728ին վենետիկ գալով հոն կը վախճանի. յիշեալին ստորագրութիւնն է հետեւեալը.

«Ես Յարութիւն արքեպիսկոպոս Կեսարիա Պաղեստինոյ, և ապաստոր Ս. Երուսաղէմի»: Մանրամասնութեանց համար տեսնել մեր աշխատութիւնը, «Միսթանկ եւ Այցեղոյ Հայ Երուսաղէմի», էջ 334—335):

Աւերակներու անսպառ նիւթ ունեցած է Կեսարիան. ձէզար փաշա Ա. քըբեայի իր շինած մզկիթները նոյն աւերակներու պատուական մարմարներով շինած է, ինչպէս կը գրեն Կեսարիոյ աւերակներուն այցելող գիտնականները. տակաւին կիսափուլ վիճակի մէջ կը գտնուին եկեղեցիներ, պալատներ, աշտարակներ և այլն և այլն. և որչափ պեղումները շարունակուին, այնքան աւերակներէն դուրս պիտի գան նոր յիշատակարաններ: 1894 ին Vigouroux և Le Camus գիտնականները այցելեցին հոն և տեսան շատ մը եկեղեցիներու փլատակներ. անոնցմէ առաջ այցելած է հոն Abbé Michon, և տեսած է ուրիշ եկեղեցիի մը կողակները: Անտարակոյս լուրջ պեղումներ և հետազոտութիւններ երևան